Մուրադյան Թ., Մխիթարյան Լ. - «Պատանի» լրագրող Վանիկ պապը - թերթ, «Հայաստանի Հանրապետություն», Ե., 21.03.2017

(Հատված հոդվածից)

Գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյան.

–Վանիկ Սանթրյանը հիանալի մարդ էր, գրող, լրագրող: Միշտ եղել է արվեստագետների, նկարիչների կողքին: Ինքն էլ շատ գեղեցիկ նկարում էր, շատ նուրբ զգացողություն ուներ: Սանթրյանի ե՛ւ գրիչը, ե՛ւ վրձինը, ե՛ւ խոսքը, ե՛ւ ներկայությունը շատ կարեւոր էր բոլորիս, մանավանդ նկարիչներիս համար:

Հորիցս՝ Էդուարդ Իսաբեկյանից երիտասարդ էր, բայց նրա ընկերներից էր, եւ երկար տարիներ շփվում էին իրար հետ: Հայրս շատ էր գնահատում, որ պահում է կապը իր հայրենի գյուղի, արմատների հետ: Դեռ խորհրդային տարիներին Վանիկ Սանթրյանը այցելություններ էր կազմակերպում Արցախ, եւ այդ այցերին մասնակից էր դարձրել նաեւ Էդուարդ Իսաբեկյանին:

Պատրաստեցին Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆԸ,

Լուսինե ՄԽԻԹԱՐՅԱՆԸ

http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20170321_6&flag=am